# ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Նոյեմբերի 30-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում իր ավարտակետին հասավ Եղիշե Չարենցի 100-ամյա հոբելյանին նվիրված տոնակատարությունների շարքը: Մայր տաճարում մատուցվեց Սբ. Պատարագ, հավարտ որի Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսի նախագահությամբ և Մայր Աթոռի միաբան հայրերի մասնակցությամբ կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ ի հիշատակ մեծ բանաստեղծի մահվան 60-ամյա տարելիցին: Արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության Մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերով նախարար Արմեն Սմբատյանը, Հայաստանի գրողների միության նախագահ Հրանտ Մաթևոսյանը, «Նաիրի» հրատարակչության տնօրեն Հրաչիկ Թամրազյանը, Կրոնի գործերի պետական խորհրդի նախագահ Լազար Սուջյանը, Եղիշե Չարենցի տուն-թանգարանի տնօրեն Լիլիթ Հակոբյանը, թանգարանի աշխատակիցները, չարենցագետներ, բազմաթիվ հավատացյալներ:

«Այսօր ոգեկոչում ենք անմեռ հոգին մի անձի, որ 100 տարիներ առաջ ծնվեց և հազիվ 40 տարեկան թողեց այս տեսանելի և անցավոր աշխարհը: Եվ ոչ ոք գտնվեց, որ նրա համար մի աղոթք ասի, ոչ փող զարկին և ոչ ներքող հնչեցրին, երբ նա իր ողջ կյանքով ներքող եղած էր հայ ժողովրդի բարձրագույն ապրումներին», – հավատացյալներին ուղղված քարոզի ընթացքում ասաց Վեհափառ Հայրապետը:

«Չարենցը ոեքվիեմ ձոնեց Կոմիտաս վարդապետին, ինքը չունեցավ իր ոեքվիեմը: Եվ այսօր, այն խորանում, որտեղ պատարագել է Կոմիտասը, Չարենցի մահվանից 60 տարի անց աղոթք ենք անում, ոեքվիեմ ենք մատուցում իր հոգու հավերժության համար», – շարունակեց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը բարձր գնահատեց Հայաստանի կառավարության նախաձեռնությունը, ըստ որի 1997 թ. հռչակվել էր չարենցյան տարի: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ նշելով հարյուրավոր այն միջոցառումները, որ իրականացվեցին այս տարվա ընթացքում Երևանում և Հայաստանի շրջաններում, բարձր գնահատեց նաև Մշակույթի նախարարության աշխատանքը: Ապա՝ դիմելով բանաստեղծի գրչակից եղբայրներին, պատգամեց ապրեցնել Չարենցին նոր կյանքի կշռույթով և ապրումներով, դառնալ ջրտուքը անկախության և ազատության գաղափարների, «լինել ոգու մարդիկ, որ կարող են իրենց գաղափարը չծախել, ինչպես Չարենցը չծախեց՝ իր կյանքի գնով արժևորելով անկախ մտածման իրավունքը»:

Չարենցյան տոնն ավարտվեց Վեհարանում, ուր կրկին չարենցյան ոգին էր՝ բանաստեղծի մասին պատմած հիշողություններով: Մշակույթի նախարարը հիշատակեց Չարենցի հոբելյանի առթիվ կազմակերպված միջոցառումները Հայաստանում և Սիրիայում: Չարենցի մասին իրենց խոսքն ասացին նաև Հրանտ Մաթևոսյանն ու Ասողիկ եպս. Արիստակեսյանը: Չարենցի տուն-թանգարանի տնօրեն տիկին Հակոբյանը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, Վեհափառ Հայրապետին հրավիրեց թանգարան՝ այցով օրհնելու Չարենցի օջախը: Հ. Թամրազյանը Վեհափառ Հայրապետին նվիրեց «Նաիրի» հրատարակչության վերջերս լույս ընծայած Չարենցի ստեղծագործությունների ընտրանի շքեղ հատորը, չարենցագետ Ալմաստ Զաքարյանը՝ Չարենցին նվիրված իր աշխատությունը: